«Դորգանէցի Դաւիթ
կաթուղիկոսի եղբայր Մէլի
քեան Բարսեղին Երէվան
ցու. եւ կողակցոյն յիւրոյ եւ
«որդոցն Ջօհրաբին Ռուստամ
«ին եւ Մկրտչին եւ դստերա
«ցն եւ հանգուցեալ ծընող
«ացն եւ համայն կենդանեաց
եւ ննջեցելոցն ամէն»
Թվին ՌՄԿԲ. (=1813).

Տեղեկութիւնք. գտնուում է հիւս. արեւել. սեան արեւմտեան երեսին. քանդակազարդ. մասուցարանաձեւ. եկեղեցի նկարէն, քանդակները ներկած կարմիր գոյնով. մեծութիւն. 1 արշ. 2 վերշ.×1 արշ. անկիւններում գրած է.

Տր. Ած. Յս. Քս.
«Յիշատակ է Սիւնս Մէլիք Ներ
«սեսի որդի մլիք Նավասորդ մլիք
«Մօսէս մլիք Բալասան մլիք Սար
»փան եւ մլիք Աղաջան երեքին
«եղբարք նորոգեցաք վասն հոգոց
«նախնեաց մերոց արծերու
«նի Սենեքերիմ Դաւիթ Բե
«կեան. Թվին ՌԿին ?(=1611)? (Թերեւս
ՌՄԿ=1811).

Տեղեկութիւնք. Գտնուում է հար. արեւել. սեան արեւմտեան երեսին մեծութիւնն է 9×11 վերշ. 8 տողից գրութիւն.

Այն սեան տակի պատուանդանի՝ կտրած հանգըստարանի խոշոր երկաթագիր գիրն է.

«Կ. դամբար. անանուն կոչի»

Ինչպէս երեւումէ խորանի մարմարեայ եւ սեան տակերի շիրիմ քարերից. հանգուցեալ Սիմէօն արքեպիսկոպոսը բաւականին տապանաքարեր է անհետացրել Նոր տաճարի շինութեան ժամանակ որման հիմերի եւ սեան տակերի շինութեանց մէջ.

«Հոգածութեամբ յառաջնորդ Սիմէօն արքեպիսկոպոսի
«եւ պատրիարգութեան սուրբ Սաղիմայ Թէոդորոս եպիսկոպոսին
«յիշատակ է Սիւնս սուրբ Սաղիմայ իմդագչի
«եւ Նվիրակ տեառն Ստեփան վրդպտին եւ ծնո
«ղացն՝ մահտեսի Մելքոնին Հռիփսիմին
»եւ եղբրցն մահտեսի Սարգսին եւ տիրացու
«Յարութիւնին եւ յակոբին եւ ամեն
«այն զարմից Նորին Թվ. ՌՄԿԴ (=1815)»

Տեղեկութիւնք. Գտնուում է հիւսիս-արեւմտեան սեան արեւմտեան ճակատին. մեծութիւնը 9×15 վերշ. 8 տող.

Այն արձանագրութիւնը՝ ցարդ փորագրած չէ այլ միայն մատիտով գրած է փորագրութեան համար.

«Ոգածութեամբ յաջորդ Սի
«մէօն բազմաշխատ եպիսկոպոսին
«յիշատակ է սիւնս Մարղեցի
«տէր Խաչատուրին եւ կողկ
«ցուն. նա եւ Դարաբաղեցի
«տէր Պետրոսին եւ կողկցուն նա
«եւ Չլաղառ Պարոն Աստուածատուր
«ին եւ կողակցուն ՌՄ.......եղծ.

Տեղեկութիւնք. Գտնուում է հար. արեւմտեան սեան արեւմտեան երեսին մեծութիւն 10½×9½ վերշ. 8 տող գրութեամբ.

Այն սեան պատուանդանի տապանաքարի գիրը.

«Թվ. ՉԽԷ այս է հանգիստ....

Մնացեալը կտրած է եւ սեան տակ մնացած.

(Շարունակելի)

Խ. Վ.

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

### ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Տ. Աշոտ վարդապետի Ճախեան, որով կարգի նախագահ Տպարանական Ժողովոյ Ս. Աթոռոյ, Թ. 14։

—Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի ի նոյն միտս, Թ. 15։

—Յանուն Յովհաննէս քահանայի Մարտիրոսեանց, միաբանի Քամյեանց եկեղեցւոյ, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալին Տփղեաց, Թ. 22։

—Յանուն Գրիգորիս քահանայի Մատինեանց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Նորին Թեմակալի. Թ. 23։

—Յանուն Գէորգ քահանայի Մկրտումեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալի վիճ. Աստրախանի, Թ. 25։

— Յանուն Կարապետ քահանայի Վլասեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Նորին Թեմակալի։

—Յանուն վիճ. Կոնսիստորիայի Շամախւոյ, որով կարգի Տ. Սահակ վարդապետն Տ. Մելքայէլեան անդամ նոյն Կոնսիստորիայի, Թ. 73։

—Յանուն Ամեն. պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքիայ Արքեպիսկոպոսի, որով լուծեալ ճանաչի պսակ Նինայի Պուպլի Զմիւռնիացւոյ ընդ այր իւր՝ բժիշկ Մանուկ Արա-

ժեան վասն ամբարիշտ բարուց վերջնոյն, Թ. 97։

—Ցանուն Հոգաբարձութեան Ներսիսեան Հոգեւոր դպրանոցի Տփղեաց, որով թոյլատրի գնել զտունն Շափինովի և կառուցանել նոր շինութիւնս ի վերայ դպրոցապատկան գետնոյն, Թ. 101։

—Օրհնութեան յանուն Հոգաբարձութեան Ս. Փրկիչ Հիւանդանոցին Կ. Պոլսոյ, Թ. 115։

—Ցանուն Գործակալին Քութայիսու Տ. Դաւիթ ա. քահանայի Տարալեան, վասն պահանջելոյ ի կտակակատարաց Ալլահվէրտիի Ալլահվէրտեանց զկտակեալն յանուն Վեհ. Հայրապետի գումար 500 րուբլեայ, Թ. 150։

—Ցանուն Սարգիս քահանայի Շիոյեան Տփղիս քաղաքի, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալին Տփղեաց, Թ. 151,

—Ցանուն Մարտիրոս քահանայի Ամիրխանեան, որով շնորհի նմա պատիւ ա. քահանայութեան, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի, Թ. 152,

—Ցանուն Գէորգ քահանայի Մոլինեան, միաբանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Բեթղեհէմի Տփղեաց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի, Թ. 153,

—Ցանուն Սիմէօն քահանայի Զմիկեան, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ կամիլաւկա, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի. Թ. 154։

— Ցանուն Ժողովրդեան Բաթում քաղաքի, որով կարգին ի քահանայութիւն նոցա Տ. Մեսրոպ Մելեան և Տ. Կարապետ Մալխասեան, Թ. 161։

—Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Եկատերինեայ Նազիրեանց, վասն նուիրելոյ նորա մի հազար (1000) րուբլի ի տրամադրութիւն Վեհ. Հայրապետի. Թ. 162։

—Ցանուն Շմաւոն քահանայի Տ. Բարսեղեան Տփղեաց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալին Տփղեաց. Թ. 167։

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

21 յունուար. Երևանի Կոնսիստորիան 1896 թ. հ. 4086 գրութեամբ յայտնում է Սինօդին, որ Տաշտօն գիւղի Յովհաննէս քհ. Տէր-Յովհաննիսեան 1891—1892 թ. կատարել է երեք չհաս պսակ, որ քննութեամբ ապացուցուած է։ Սինօդը վճռեց պսակները անվաւեր ճանաչել, իսկ պսակադիր Յովհաննէս քահանայ Տէր—Յովհաննիսեանին ենթարկել դատի ըստ զօրութեան պատժական օրինաց 1575 յօդ.-ի։

21 յուն. Երևանի Կոնսիստորիան թ. 2059 յայտարարութեամբ միջնորդում է լուծել Կարսեցի Մկրտիչ Յարութիւնեանի և նորա կին Գայիանէի պսակը, որովհետև նոքա վաղուց իրարից բաժանուել են և ապրում են ապօրինի կենակցութեամբ։ Սինօդը վճռեց մերժել Կոնսիստորիայի միջնորդութիւնը և Մկրտիչ Յարութիւնեանին ու իւր կին Գայիանէ Յարութիւնեանին ապօրինի կենակցութեան համար ենթարկել միամեայ եկեղեցական ապաշխարանքի՝ նոցա ամուսնական կապը անխզելի թողնելով, մինչև ամուսիններից մէկի մահը։

23 յուն. Գանձակի նահանգի Ելենենդորֆ աւանի հայ գաղութի յանուն Վեհափառ Հայրապետի տուած խնդրի համեմատ Սինօդը վճռեց հրամայել Գանձակի Հոգևոր կառավարութեանը՝ օրինական ճանապարհով պայման կապել Ելենենդորֆի հայ գաղութի հետ, տալով նոցա ս. Յովհաննէս եկեղեցու «Արարատ» կալուածքից երեսուն դեսեատին հող, 25 տարի ժամանակաւ՝ տարին 300 ռ. վարձով։ Պայմանը պէտք է լինի, որ Ելենենդորֆի հայերը բնակութիւն հաստատեն այդ հողի վերայ և 25 տարին լրանալուց յետոյ, եթէ կամենան նորից 25 տարի ժամանակով վարձել այդ կտոր հողն, աւելացնեն 100 ռուբլի նախկին 300 ռ. վերայ։

26 յուն. Ս. Սինօդը Ռուսական «Կարմիր խաչի» ընկերութեան թ. 4896 գրութեան համաձայն վճռել էր ս. Յարութեան տօնին Հայոց եկեղեցիներում գանձանակ ժողովել ի նպաստ նոյն ընկերութեան։ Այժմ ստանալով Շամախւոյ և Բեսսարաբիոյ թեմերում

ժողոված 229 ռ. 94 կ., վճռեց պատուիրել գանձապահին՝ յիշեալ գումարը գրել ատենադպրանոց տումարի մէջ և ներկայացնել Ատեանս, որպէս զի ուղարկեն «Կարմիր խաչի» ընկերութեան գլխաւոր վարչութեանը. իսկ Վրաստանի և Իմերէթի, Երեւանայ, Ղարաբաղի Կոնսիստորիաներին պատուիրել փութով ներկայացնել Սինոդին «Կարմիր խաչի» ընկերութեան համար ժողոված գանձանակագրամը:

26 յուն. Սինոդը վճռեց ատենադպրանոց տումարի մէջ մուծանել Ալաշկերտի գաղթականների անունով հանգանակած փողի մնացորդը՝ այն է 10,250 ռ. ոսկի փողով որ հաւասար է 15,375 թղթադրամի:

28 յուն. Սինոդը վճռեց պատուիրել Շամախու Կոնսիստորիային մահմեդական Մահմեդ Մահարրամ օղլուն իւր խնդրի համաձայն մկրտութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:

28 յուն. Աւետարանոց գիւղի բնակչուհի Սոնա Կարապետ—բէգեան Բաղդասարեան Վեհափառ Հայրապետին խնդիր էր մատուցել՝ իւր ամուսին Միրզա Մովսիսեանի երկար ժամանակեայ առանց համբաւի տարակայութեան պատճառաւ, թոյլ տալ իրեն մտանել ի նոր ամուսնութիւն: Վեհափառ Հայրապետի հրամանի համեմատ՝ Սինոդը անօրինեց պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային՝ Շուշեցի Միրզա Մովսիսեանի տարակայութեան մասին յայտարարել «Սինոդական Հրատարակութեան» մէջ, ի հաշիւ խնդրատու Սոնա Բաղդասարեանի, և եթէ մինչև վեց ամիսը չիմացուի Միրզա Մովսիսեանի ուր լինելը, թոյլ տալ նորա կնոջը մտանել ի նոր ամուսնութիւն:

30 յուն. Ղարաբաղի Կոնսիստորիայի թ. 2230 յայտարարութիւնը լսելով՝ Սինոդը վճռեց թոյլ տալ յիշեալ Կոնսիստորիային, օրինաւոր պայմանով Գանձասարի վանքի կալուածքում երևացող պղնձահանքը տալ հանքարան Ըլէքվէրովին շահագործելու համար:

30 յուն. Սինոդը վճռեց հրամայել Երևանի Կոնսիստորիային մահմեդական Խըդօ Օսման օղլուն, իւր խնդրի համաձայն, մկրտութեամբ ընդունել Հայոց եկեղեցու ծոցը:

4 փետր. Սինոդը լսելով Օշական գիւղի բնակիչների խնդիրը և Երևանի Կոնսիստորիայի թ. 1741 յայտարարութիւնը այդ մասին, հրամայեց Օշականի Եղիշէ քահանայ Դէօրգեան—Դարբինեանին անորոշ ժամանակով ուղարկել Սևանի անապատը ապաշխարելու, որովհետև նա մինչև հիմա չի կրել Սինոդի որոշած պատիժը:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1898 Թ. ՓԵՏՐՈՒԱՐ.

# ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՍԱՆԴՈՒԽՏ,

### ՆՐԱ ՆՈՐ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԸ.

Արշակունեաց բարետոհմիկ սերնդից ընձիւղած այս մի հատիկ կոյսի համար կարդում ենք իրեն նուիրած մի կտոր շարականի մէջ. «Քեւ պարծի այսօր սուրբ եկեղեցի, ո՜վ վկայուհի սուրբ Սանդուխտ, որ զտիկնութեանն քո թողեր զփառս, որ զհայրականն քո թողեր զպաշտօն»: արդ՝ ինչ պաշտօն և փառքեր էին նոքա, որ թողեց վկայուհին, և ում համար: Թէ ում համար թողեց նա այդ ամէնը, այս ցոյց է տալիս մեզ նոյն գողտրիկ շարականը՝ բացականչելով. «Վասն Քրիստոսի»: իսկ թէ ի սէր բարեգութ Փրկչի նրա թողածները որպիսի պաշտօններ և փառքեր էին, որոնցից սուրբ վկայուհւոյս կամաւորապէս հրաժարուելու պատճառաւ՝ ըստ շարականիս, մեր սուրբ Եկեղեցին ևս պարծանքով առաւ ու փնջեց նրան իւր սրբոց հետ՝ ահաւասիկ:

Ինչպէս շատ աշխարհներ, այնպէս և Հայաստան այն ինչ ծանրապէս խորշում էր կռապաշտութեան մէջ, նոյն այն միջոցին Թովմաս առաքեալի հրամանաւ սուրբն Թադէոս անցնելով Եդեսիա՝ աւետարանական խօսքերով «Ձայնէր զամենեսեան յերկնաւոր ընթրիսն» (Մատթ. Ը. 11): Այս երկնաւոր ընթրիքին դեռ ևս Փրկչի ժամանակից Եդեսիայի մէջ անձկով իմն սպասող մեր քաջն Աբգար, իմանալով առաքեալի գալուստը, այլև իմանալով որ նա անդեղ անդարման հիւանդներ է բժշկում՝ որովհետև այս ժամանակ անբուժելի ցաւով հիւանդ էր և ինքը, հրճուանօք ասում է իւր մտքում. «Նա է, վասն որոյ գրեացն Յիսուս», և անմիջապէս կանչում է իւր մօտ (Խոր. ԼԳ.): Սուրբն Թադէոս մտնելով Աբգարի մօտ ոչ միայն ողջ է հանում տկար արքային՝ փարատելով նորա